INECO

Inecobank.am
+374 10 510 510
Inecobank@inecobank.am

«Խաղերը սկսված են. վճարիր, ակտիվացրու, շահիր» արշավի մասնակցության պայմաններ

1. Սույն թվականի հունիսի 11-ից մինչև օգոստոսի 11-ն ընկած ժամանակահատվածում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից թողարկված Visa տեսակի, այն է Visa Digital, Visa Classic, Visa Classic Pension, Sprint Card, Visa FIFA World Cup 26™, Visa Gold, Visa Platinum, Visa Signature, Visa Infinite քարտերի (այսուհետ նաև՝ Քարտ կամ Քարտեր), քարտապանների (այսուհետ՝ Քարտապան կամ Քարտապաններ) համար Բանկի կողմից իրականացվում է արշավ (այսուհետ՝ Արշավ):
2. Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հասանելի է www.inecobank.am կայքում՝ հետևյալ հղումով:
3. Մասնակցելով Արշավին՝ Քարտապանն անվերապահ ընդունում է սույն Արշավի մասնակցության բոլոր պայմանները:
4. Բանկն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն փաստաթղթում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի www.inecobank.am կայքում՝ հետևյալ հղումով:
5. Արշավը նախատեսված է գործող և նոր տրամադրվող Քարտերի համար: Արշավին մասնակցությունը կատարվում է Արշավի պայմաններին համապատասխանող վճարումներ կատարելիս, մասնակցության անհատական կոդը Արշավի համար պատրաստված էջում մուտքագրելիս, և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ մասնակցության այլ տեսակի վճար:

Խաղարկության մասնակցության պայմաններ

6. Արշավի ընթացքում իրականացվող խաղարկությանը մասնակցության նպատակով սույն թվականի հունիսի 11-ից մինչև օգոստոսի 11-ն ընկած ժամանակահատվածում՝ Բանկի Քարտապանները պետք է՝ կատարեն միանվագ 5,000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ)-ին համապատասխան անկանխիկ վճարային գործարքներ POS կամ կամ vPOS տերմինալների միջոցով:
7. Յուրաքանչյուր միանվագ 5,000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) վճարային գործարքից հետո մինչև 5 աշխատանքային օրերի ընթացքում Քարտապանին կտրամադրվի Արշավի մասնակցության կոդ:

8. Յուրաքանչյուր գործարքի համար ստացված Արշավի մասնակցության կոդը Քարտապանները պետք է ակտիվացնեն Բանկի Տելեգրամ հարթակում (չատբոտի հղումը հրապարակված է Բանկի պաշտոնական կայքէջում) և ստուգեն արդյոք մուտքագրված կոդով ճանաչվել են շահող (այսուհետ՝ Շահող), թե ոչ:
9. Արշավի ընթացքում Քարտապանները հնարավորություն ունեն շահելու՝
    - 1000 հատ FIFA World Cup 26™ Trionda Pro Ball
    - 50 հատ նվեր քարտ Ադիդասից 15,000ՀՀ դրամ
    - 40 հատ Airpods 4
    - 20 հատ Play Station 5
    - 1 ուղևորություն FIFA World Cup 26™ հաղթող երկիր դեպի ՖԻՖԱ 2026 աշխարհի

    խաղերի հաղթող երկիր ուղևորություն նախատեսված երկու անձի համար:
10. Դեպի ՖԻՖԱ 2026 աշխարհի խաղերի հաղթող երկրի ուղևորության խաղարկությունն իրականացվելու է Արշավի ավարտից հետո, բոլոր այն Քարտապանների միջև, ովքեր կակտիվացնեն Տելեգրամյան բոտը և նվազագույնը մեկ պրոմոկոդ: Քարտապանները կարող են այնքան անգամ մասնակցել Դեպի ՖԻՖԱ 2026 աշխարհի խաղերի հաղթող երկիր ուղևորության խաղարկությանը, որքան անգամ ստացել են պրոմոկոդ:
11. Արշավի ընթացքում շահած նվերները հնարավոր է հաճախորդներին տրամադրել մինչև՝

    - 1000 հատ FIFA World Cup 26™ Trionda Pro Ball - մինչև 20.08.2026թ.-ը,
    - 50 հատ նվեր քարտ Ադիդասից 15,000ՀՀ դրամ - մինչև 20.08.2026թ.-ը,
    - 40 հատ Airpods 4 - մինչև 20.08.2026թ.-ը,
    - 20 հատ Play Station 5 - մինչև 20.08.2026թ.-ը,
    - 1 ուղևորություն դեպի ՖԻՖԱ 2026 աշխարհի խաղերի հաղթող երկիր

    ուղևորություն նախատեսված երկու անձի համար - մինչև 31.08.2026թ.-ը:
12. Արշավի մասնակցության կոդերը Քարտապանին ուղարկվելու է Բանկի կողմից Viber հաղորդագրության միջոցով, այն պարագայում, երբ Քարտապանը չունի Viber հավելված, ապա Արշավի մասնակցության կոդը կստանա SMS հաղորդագրության միջոցով:
13. Արշավի մասնակցության կոդերը քարտապաններին ուղարկվելու է արշավի երկրորդ շաբաթվանից սկսած յուրաքանչյուր երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ նախորդող ժամանակահատվածում կատարված վճարումների համար:

14. Ստացված կոդերով Շահող ճանաչվելու փաստը ստուգելու նպատակով Քարտապանը պետք է՝
    - մուտք գործի Ինեկոբանկ ՓԲԸ-ի Տելգրամ հարթակի չատբոտ (չատբոտի հղումը հրապարակված է Բանկի պաշտոնական կայքէջում),
    - ծանոթանա Արշավի «Ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ին և հաստատի Արշավի բոլոր պայմաններին անվերապահ համաձայնությունը՝ սեղմելով «Հաստատում եմ» կոճակը,
    - Մուտքագրի իր բջջային հեռախոսահամարը, որին ստացել է Արշավի մասնակցության կոդը
    - Մուտքագրի իր անուն ազգանունը,
    - չատբոտի նամակի պատուհանում մուտքագրի ստացված Արշավի մասնակցության կոդը՝ օգտագործելով լատինատառ այբուբեն, սեղմի ուղարկելու կոճակը և ստանա կոդի ակտիվացման պատասխանը, այն է՝ Շահող ճանաչվելու կամ շահում չունենալու վերաբերյալ հաղորդագրությունը:
15. Արշավի մասնակցության կոդերի հաշվարկը կատարվում է հետևյալ տրամաբանությամբ յուրաքանչյուր 5,000 ՀՀ դրամ և ավելի վճարումների դեպքում՝
    - Visa Digital, VIsa Classic, Visa Classic Pension, Visa Gold, Visa Platinum, Visa Signature, Visa Infinte քարտերով յուրաքանչյուր վճարման համար՝ 1 Արշավի մասնակցության կոդ,
    - Visa FIFA World Cup 26™ քարտերով յուրաքանչյուր վճարման համար՝ 2 Արշավի մասնակցության կոդ,
    - Sprint Card քարտերով յուրաքանչյուր վճարման համար՝ 3 Արշավի մասնակցության կոդ:
16. Խաղարկության մասնակցության անհատական կոդի հետ մեկտեղ հաճախորդին ուղարկվելու է նաև ակտիվացման հղումը, որը տեղադրված է լինելու Բանկի պաշտոնական կայքէջում:
17. Քարտապաններին Արշավի մասնակցության կոդերը ուղարկվելու են 16.06.2026թ.-ից սկսած:
18. Քարտապանները կարող են կատարել Արշավի մասնակցության կոդերի ակտիվացում մինչև 18.08.2026թ.-ը:
19. Քարտից քարտ փոխանցումները, բանկային հաշիվների միջև փոխանցումները, Քարտով կատարված կոմունալ և հեռահաղորդակցման ծառայությունների դիմաց վճարումները, էլեկտրոնային դրամապանակների միջոցով կատարվող գործարքները,

վարկերի մարմանն ուղղված վճարումները, պետական տուրքերի և հարկերի գծով վճարումները՝ Արշավի շրջանակներում չեն դիտարկվի որպես վճարային գործարքներ:

20. Բանկը պատասխանատվություն չի կրում Արշավի շրջանակներում սահմանված շահումի որակի կամ համագործակցող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների համար:

Շահումների ստացում.

21. Շահումների տրամադրումը հաճախորդներին իրականացվելու է հետևյալ մասնաճյուղերում՝
    - FIFA World Cup 26™ Trionda Pro Ball գնդակների և Ադիդասից նվեր քարտերի դեպքում - շահում ունեցող Քարտապանները պետք է մոտենան Ինեկո Սթոր, Գյումրի, Վանաձոր և Արմավիր մասնաճյուղերից որևէ մեկը,
    - Airpods 4 կամ PlayStation 5 շահումների դեպքում - շահում ունեցող Քարտապանները պետք է մոտենան Ինեկո Սթոր մասնաճյուղ:
22. Շահումի ստացման ժամանակ Քարտապանը համապատասխան մասնաճյուղի աշխատակցին պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթը և շահումը հավաստող հաղորդագրությունը:
23. Շահումը ենթակա է տրամադրման բացառապես այն Քարտապանին ով Բանկի կողմից ստացել է Արշավի մասնակցության կոդը:
24. Արշավի շրջանակներում Բանկի կողմից սահմանված նվերը՝ Քարտապանի պահանջով ենթակա չեն փոխարինման այլ ապրանքի, ծառայության կամ գումարի հետ:
25. Շահումի տրամադրման պահին Քարտապանը պետք է ունենա սույն պայմանների 1-ին կետում նկարագրված առնվազն մեկ գործող Քարտ:

Գլխավոր մրցանակի խաղարկության ամփոփում.

26. Գլխավոր մրցանակի խաղարկության ընթացքում շահող Քարտապանի (այսուհետ՝ Շահող) ընտրությունը կատարվելու է պատահականության սկզբունքով՝ համապատասխան ծրագրի միջոցով:
27. Գլխավոր մրցանակը՝ ուղևորությունը Դեպի ՖԻՖԱ 2026 հաղթող երկիր, հաղթող Քարտապանը կարող է օգտագործել մինչև 01.12.2026թ.-ը:
28. Խաղարկությունը նախատեսվում է ամփոփել և մրցանակը շահող Քարտապանին տրամադրել մինչև 31.08.2026թ.-ը:
29. Արշավի ընթացքում հիմնական մրցանակը՝ դեպի ՖԻՖԱ 2026 հաղթող երկրի ուղևորությունը, շահող Քարտապանին սահմանված մրցանակը տրամադրելու

նպատակով Բանկի աշխատակիցը հեռախոսազանգի կամ էլեկտրոնային հասցեին ուղարկվող նամակի միջոցով կապ կհաստատի վերջինիս հետ:

30. Ամփոփման ընթացքում շահող ճանաչված Քարտապանին կատարվելու է երեք զանգ: Յուրաքանչյուրը 2 րոպե միջակայքի պահպանմամբ: Այն պարագայում, երբ Քարտապանը երեք զանգի ընթացքում չպատասխանի հեռախոսազանգերին, ապա մրցանակի տրամադրումը կկատարվի այլ Քարտապանի՝ ամփոփման ընթացքում կրկին պատահականության սկզբունքով ընտրության կատարմամբ:
31. Եթե Բանկից անկախ ցանկացած պատճառով անհնար լինի կապ հաստատել Շահող Քարտապանի հետ Բանկում գրանցված հեռախոսահամարի միջոցով՝ սույն փաստաթղթի 29-րդ կետում նշված երեք փորձերի ընթացքում, ապա Բանկն իրավասու է անվավեր համարել տվյալ Շահումը՝ չունենալով որևէ լրացուցիչ պարտականություն/պարտավորություն Քարտապանի հանդեպ: Քարտապանը կրում է ճշգրիտ և վավեր հեռախոսահամարի և/կամ էլեկտրոնային հասցեի տրամադրման պարտականությունը և դրա ոչ պատշաճ կատարման հետևանքով առաջացած բոլոր ռիսկերը:
32. Որպես Շահող վերջնական հաստատվելու և նվերը ստանալու համար, ըստ Բանկի պահանջի, Քարտապանը պարտավոր է Բանկի համապատասխան ներկայացուցչին ներկայացնել իր՝ անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, ինչպես նաև պարտավոր է ստորագրել շահումի ստացման վերաբերյալ ակտը: Նշված գործողություններից ցանկացածը կատարելուց հրաժարվելու կամ կատարելու անհնարինության դեպքում՝ Բանկի հայեցողությամբ շահումը ենթակա չէ հանձնման և Բանկն իրավասու է անվավեր համարել նշված շահումը՝ չունենալով որևէ լրացուցիչ պարտավորություն տվյալ Քարտապանի հանդեպ:
33. Մասնակցելով Արշավին՝ Քարտապանները տալիս են համաձայնություն, իրենց անունը և/կամ կոնտակտային տվյալները Արշավը սպասարկող ընկերության ներկայացուցչին տրամադրելու վերաբերյալ:
34. Ինեկոբանկ ՓԲԸ աշխատակիցները նույնպես կարող են մասնակցել արշավին, բացառությամբ հիմնական մրցանակի խաղարկությանը:

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ</u>.

Արշավի ընթացքում դեպի ՖԻՖԱ 2026 աշխարհի խաղերի հաղթող երկիր ուղևորության խաղարկությանը չեն կարող մասնակցել և/կամ ճանաչվել շահող՝

1. Այն Քարտապանները կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձինք, ովքեր Բանկի հանդեպ ունեն կամ ունեցել են ժամկետանց պարտավորություններ Արշավի անցկացմանը նախորդող 5 տարիների ընթացքում և/կամ Բանկի հետ գտնվել են դատական վեճի մեջ և/կամ այլ եղանակով Բանկի նկատմամբ ցուցաբերել են ոչ բարեխիղճ/պատշաճ վարքագիծ:
2. Բանկի Աշխատակից հանդիսացող Քարտապաններ և վերջիններիս հետ փոխկապակցված և/կամ կապված և/կամ վերջիններիս ընտանիքի անդամ հանդիսացող անձինք:

Վերը հիշատակված սահմանափակումները կիրառվում են ցանկացած Քարտապանի հետ փոխկապակցված անձանց նկատմամբ *(Փոխկապակցված եզրույթը որոշվում է՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով)*:

Վերը նշվածը պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի Քարտապաններից պահանջելու ցանկացած փաստաթուղթ և/կամ տեղեկատվություն: Եթե Քարտապանը հրաժարվում է տրամադրել Բանկի կողմից պահանջված փաստաթղթերը և/կամ տեղեկատվությունը, ապա համարվում է, որ նա հրաժարվել է մասնակցել Արշավին:
Մասնակցելով Արշավին Քարտապանը համաձայն է, որ Բանկը վերը նշված փաստերը և հանգամանքները գնահատելու է իր սուբյեկտիվ կարծիքով՝ իր մոտ առկա և Քարտապանի կողմից տրամադրված տեղեկատվության շրջանակներում:

35. Այս արշավը կազմակերպվում և իրականացվում է բացառապես «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից: FIFA™-ն չի հանդիսանում արշավի կազմակերպիչ, հովանավոր կամ երաշխավոր և որևէ պատասխանատվություն չի կրում արշավի, խաղարկության, մրցանակների կամ դրանց հետ կապված որևէ պարտավորության կատարման համար: FIFA™-ն պատասխանատվություն չի կրում որևէ պահանջի, վնասի, կորստի կամ ծախսի համար, որոնք ծագում են արշավին մասնակցելու կամ մրցանակից օգտվելու արդյունքում կամ դրա հետ կապված:

Դեպի ՖԻՖԱ 2026-ի հաղթող երկիր խաղարկությունը ներառում է.

36. Բանկի կողմից կատարվող հետևյալ ծախսերը 2 (երկու) անձի հաշվարկով՝
    - Բանկի ընտրությամբ՝ ուղիղ կամ ոչ ուղիղ թռիչք (կախված թռիչքների առկայությունից) էկոնոմ դասով՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքից դեպի հաղթող երկրի համապատասխան քաղաք և հետադարձ թռիչք՝ դեպի Հայաստանի Հանրապետություն՝ Երևան քաղաք: Բանկն իրեն իրավունք է վերապահում ընտրել ավիաընկերությունը, թռիչքի ժամը և ամսաթիվն իր հայեցողությամբ:

- Գիշերակաց երեք, չորս կամ հինգ աստղանի հյուրանոցներից մեկում, որն ընտրվելու է Բանկի կողմից, որի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 6 օրը և 5 գիշերը: Շահողի կողմից հյուրանոցում կատարված ցանկացած լրացուցիչ ծախս՝ Բանկի կողմից չի հատուցվում:
- Փոխադրումներ՝ օդանավակայանից դեպի հյուրանոց, այնուհետև հյուրանոցից՝ օդանավակայան:

37. Ուղևորության ընթացքում կամ դրա կապակցությամբ կրած մնացած բոլոր ծախսերը, որոնք նշված չեն սույն պայմաններում, ներառյալ, բայց չսահմանափակվելով այն ծախսերը, որոնք կապված են անձնագրի, վիզայի կամ մուտքի թույլտվության այլ փաստաթղթերի, ճանապարհորդական ապահովագրության, Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներից դեպի Երևան քաղաք և Երևան քաղաքից հետադարձ ուղղությամբ փոխադրման ծախսերը, անձնական ծախսերը հոգում է/են միայն Շահողը, և Բանկը որևէ պարտավորություն կամ պատասխանատվություն չի կրում այդ ծախսերի , ինչպես նաև դեպի Եվրոպա մուտքի թույլտվությունը ստանալու համար:
38. Ուղևորության կազմակերպման ընթացքում Շահողը պետք է խստորեն հետևեն անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու և այլ կազմակերպչական հարցերի հետ կապված Բանկի կողմից սահմանված ցուցումներին և ժամանակացույցին, ներկայացնեն Բանկին կամ նրա կողմից լիազորված անձին ուղևորության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և բնօրինակները, ներառյալ՝ անձնագրերի, մուտքի իրավունք վերապահող փաստաթղթերի և/կամ վիզաների պատճենները, ըստ անհրաժեշտության, ուղևորության օրվանից առնվազն 20 (քսան) օր առաջ:
39. Բանկը պատասխանատվություն չի կրում թռիչքների բացակայության, դրանց չեղարկման կամ ուշացումների և/կամ դրանց արդյունքում ուղևորության չեղարկման համար: Ուղևորության վավերության ժամկետը սահմանափակվում է ուղևորության ավիատոմսերում նշված օրերով և/կամ Բանկի կամ նրա կողմից նշանակված անձի կողմից տրված ուղևորության տոմսերով: Ուղևորություն Շահողը պատասխանատու է ուղևորվելու համար գործող և պահանջվող ժամկետով վավեր անձնագիր և Բանկի կողմից ու հայեցողությամբ սահմանված այլ անհրաժեշտ թույլտվություններ և փաստաթղթեր ստանալու համար:
40. Եթե Շահողը չի/չեն բնակվում Հայաստանի Հանրապետությունում և/կամ Երևան քաղաքում, Բանկը չի նախաձեռնելու և պարտավոր չէ վճարել Շահողի՝ Հայաստանի

Հանրապետություն և/կամ Երևան քաղաք ժամանելու/մեկնելու և իր բնակության վայր վերադառնալու կապակցությամբ առաջացած ծախսերը:

41. Բանկը որևէ պարտավորություն չի կրում, եթե Շահող Քարտապանը՝ Բանկից անկախ որևէ պատճառով չի կարող օգտվել ուղևորությունից, ներառյալ՝ Ուղևորության համար անհրաժեշտ որևէ փաստաթղթերի բացակայությունը կամ որևէ այլ պատճառ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) Շահողի ուշացումը Երևանի օդանավակայանում:
42. Շահողը ՉԻ ԿԱՐՈՂ ՓՈԽԱՆՑԵԼ ուղևորությունը որևէ այլ անձի:
43. Ուղևորության ողջ ընթացքում Բանկը պատասխանատվություն չի կրում Շահողի առողջությանը (կյանքին) և/կամ գույքին հասցված վնասի համար, ինչպես նաև երրորդ անձանց առողջությանը (կյանքին) և/կամ գույքին հասցված վնասի համար:
44. Շահող Քարտապանի կողմից դեպի Ֆիֆա 2026 աշխարհի խաղերի հաղթող երկրի մուտքի թույլտվության վիզայի/արտոնագրի հետ կապված ծախսերը փոխհատուցվում են Բանկի կողմից:

Հետվճարի տրամադրման պայմաններ.

45. Սույն արշավի շրջանակում Քարտապանները հունիսի 11-ից մինչև հուլիսի 19-ն ընկած ժամանակահատվածում վճարելով սույն պայմանների 41-րդ կետում նշված վայրերում կստանան 10% հետվճար՝ առավելագույնը 10,000 ՀՀ դրամ:
46. Հետվճարը տրամադրվելու է հետևյալ վայրերում կատարված վճարումների համար՝ Paulaner, The Garden, Beatles Pub Yerevan, Dors, Beer academy:
47. Արշավի պայմաններին բավարարած յուրաքանչյուր Քարտապանի միանվագ կտրամադրվի վերոնշյալ կետերում կատարված վճարումների հանրագումարի 10 տոկոսի չափով միանվագ հետվճար, առավելագույն գումարը՝ 10 000 ՀՀ դրամ:
48. Արշավի ընթացքում հաշվարկվում է Քարտապանի յուրաքանչյուր 1-ին կետով սահմանված գործող Քարտով կատարված վճարումները:
49. Արշավի շրջանակներում միանվագ հետվճարը Քարտապանին տրամադրվում է՝ առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Բանկը:
50. Արշավի մասնակցի Քարտը միանվագ հետվճարի տրամադրման պահին պետք է լինի գործող:
51. Վճարային գործարքները հաշվարկելու համար հիմք է ընդունվում գործարքի կատարման ամսաթիվը:

Inecobank.am
+374 10 510 510
Inecobank@inecobank.am

52. Բանկի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Բանկի կողմից:
53. Կից Քարտերով կատարված գործարքների դիմաց հետվճար չի հաշվարկվելու և չի վճարվելու Քարտապանին:
54. Արշավի գործողության ընթացքում և վերջինիս շրջանակներում հաշվարկված միանվագ հետվճարը միանվագ փոխանցվելու է Քարտապանի ընթացիկ դրամային հաշվին մինչև 01.10.2026թ.-ը:

Ինեկոբանկ ՓԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ՝ , կամ զանգահարել 010-510-510 հեռախոսահամարով:

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: